# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«7» հոկտեմբերի 2024 թվականի N: 468 -Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲԱԳՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՋԵՄՄԱ ԱԴԱՄՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Ջեմմա Ադամյանի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կայարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անիպեմզայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության միացյալ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կայարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված Ջեմմա Ադամյանի լիազորությունները:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կայարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անիպեմզայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 2-ի N126-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 2-ի N171-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 21-ի N233-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 253-Ա որոշման հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «Ջեմմա Ադամյան» բառերը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

*Իսկականի հետ ճիշտ է՝*